

ՆՈՐ ԱՎԵԴԱՔԵՐ

Գ. ՏԱՐԻ

ՀԱԼԷՊ, 28 ՅՈՒՆԻՍ, 1930

ԹԻԻ 11

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԻՒՆ

ՊԱՏԳԱՄՆԵՐ

ԵՐԿՐՈՐԴ ՄՂՈՂ

ՎԵՐ. Մ. Կ. ՓԱՓԱԶԵԱՆ

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ՊԷՆՏԵԿՈՍՏԻՒ 1900ՐԴ ՏԱՐԵԴԱՐԶԸ

ՎԵՐ. Կ. ԱՏԱՆԱԼԵԱՆ

ԴՊՐՈՅ ԵՒ ՔՐԻՍՏՈՍ

ՎԵՐ. ՅԿ. ՇՆՈՐՀՕՔԵԱՆ

ԿԱՆՏԻ

ՎԵՐ. Բ. ԼԵՒՈՆԵԱՆ

ՏՐ. ՈՒ. Ն. ԶԷՅՄՊԸՐՍ

ՎԵՐ. Ս. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ԱՇԽԱՐՀԻ ՇՈՒՐԶ

ԱՅԼԵՒԱՅԼ

ՆԱԽԿԻՆ ԱՅՆԹԱՊԻ Բ. ԵԿԵՂԵՑԻՒՆ ԺՈՂՈՎԸ

ԻՆԶՊԷՍ ԿԸ ԳՆԱՀԱՏԵՆ

ԻՆԶՊԷՍ ԿԸ ԴԻՏԵՆ

ԼՈՒՐԵՐՈՒ ԲԱԺԻՆ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷԶԸ

NOR AVEDAPER
BOITE POSTALE 287, ALEP, SYRIE

ՏՊԱՐԱՆ «ԳՈՂԷՃ» ՀԱԼԷՊ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷՋԸ

ԾՆՈՒՆԴԻ ԵՐԳԸ

Ազգայնականության Զուգահեռ Տիրմանի
գրադարանին

ԳԼՈՒԽ Գ.

ԵՐԿՐՈՐԴ ՈՎԻՆ

«Ո՛հ, ո՛չ, ո՛վ Բարի Ոգի, կ'աղաչեմ,
մի՛, մի՛ ըսեր այդպէս, խնայէ՛, թող չը-
մեռնի, կ'աղաչեմ», թախանձեց Սքրուճ:

«Եթէ ապագային այս պատկերը կը
փոխուի», ըսաւ Ոգին, «Տղան անգամ
մ'ալ հոս նստած չը՛ պիտի տեսնուի,
բայց ի՞նչ կայ, ի՞նչ կը մտահոգուիս,
աւելի աղէկ չ'է որ անանկները մէջտե-
ղէն վերնան:»

Սքրուճ գլուխը կախեց, վիշտէն ու
զղջումէն նուաճուած, որովհետեւ Ոգիին
յանդիմանական շեշտը իր սիրտը աւելի
ու աւելի կը մորմոքէր:

«Ո՛վ մարդ, ըսաւ Ոգին, «Եթէ
մարդ ես, եթէ սիրտ ունիս, ըսէ՛, ի՞նչ
սրտով ասանկները մահուան միայն ար-
ժանի կը նկատես, Դու որ ասանկներուն
համար այս ընդարձակ աշխարհին մէջ
մատ մը հող տալ չ'էիր կամենար, ըսէ՛,
արդեօք ամենակարող Աստուծոյ աչքին
առջև ո՞վ աւելի արժանի է մեռնելու,
այս անմեղ մանկի՞կը թէ զո՞ւն, ո՞վ է
մըջիւնը, ո՞վ Տէր, որ կը յանդգնի խոր-
հիւ թէ իր անօթի եղբայրները պէտք ե-
ղածէն աւելի լեցուցած են աշխարհը»:

Սքրուճ ծնրադրեց Ոգիին առջև, ալ
համարձակութիւն չունէր վեր նայելու:

«Տիար Սքրուճի կենացը»

Այս ձայնը լսելով Սքրուճ գլուխը
վերցուց և տեսաւ որ Պօպ լեցուն բաժա-
կը կը հրամցնէր իր կնոջը ըսելով.—
«Տիար Սքրուճի կենացը, չէ՞ որ մեր վա-
յելած այսքան բարեքները անոր շնոր-
հիւն է, երանի թէ ինք ևս մեր մէջ
գտնուէր»:

(Շարունակելի) (20)

ՆՈՒԷՐԻ ԵՒ ՆՈՒՐԱՏՈՒԻ ԿՈՅՐԵՐՈՒ
ՎԱՐԺԱՐԱՆԻՆ, ՀԱԼԷՊ

(15 Փետր. 1930—3 Յունիս, 1930)

Տիարք Յակոբ Արքեան, Պարսկա-
ստանէն, 2 ոսկի Խաչիկ Ոսկերիչեանի
միջոցաւ, Առանայէն 15.30 տոլար ան-
գամ մը և 18.72 տոլար Երկրորդ անգամ,
Պօպոս Թիւթիւնճեան, Գալատուրան 20
դրշ. սուրի, հետեւեալները Պէյլանէն—
Եռահաննա Մելքիսէթեան, 10 դրշ. ար-
ծաթ, Գրիգոր Լուսինյան 5 դրշ. արծաթ,
Մովսէս Երանեան 6 դրշ. արծաթ, Մի-
սակ Պէհաւրբեան 40 դրշ. արծաթ,
Սարգիս Ճինպաչեան 20 դրշ. արծաթ,
Յրթն. Սողոմոնեան 10 դրշ. արծաթ,
Տիկնայք Մայրիկ Պէյլանէն, 40 դրշ.
արծաթ, Մարիամ Վարժապետեան 10
դրշ. արծաթ, Երանուհի Աւետիքեան
20 դրշ. արծաթ, Վարդանուշ Տէմիրճե-
ան 5 դրշ. արծաթ, Տէր և Տիկ. Սար-
գիս Երեցեան 35 դրշ. արծաթ, Օր. Ռ.
Պետոյեան 20 դրշ. արծաթ, Հալէպէն
Տիկնայք Լուսաբեր Տէմիրճեան 80 դրշ.
արծաթ, Եսթեր Կէօվօղլանեան 26 դրշ.
արծաթ, Մարիամ Նինոյեան 40 դրշ.
արծաթ, Եղիսաբեթ Ծանճիկեան 60 դրշ.
արծաթ, ընկալազիր Թիւ 40Տ՝ 60 դրշ.
արծաթ, «Ռահնիւմա» ի միջոցաւ 9.00
տոլար:

Ս. Ս. ՄԱՆՈՒԿԵԱՆ

“ՆՈՐ ԱԻԵՏԱԲԵՐ”Ի ԳՈՐԾԱԿԱԼԸ

Հարաւային Ամերիկայի մէջ Արխէն-
թինայի և Ուրուկուէյի Հանրապետու-
թեանց մեր ընդհանուր գործակալն է
ՏԻԱՐ ՅՈՎՀ. ՀԱԼԷՊԼԵԱՆ. կը խնդրուի
այդ շրջաններու մեր բաժանորդներէն
որ յետայսու «Նոր Աւետարեք»-ի հետ ի-
րենց բոլոր հաշիւները կատարին Տիար
Հալէպլեանի միջոցաւ որուն հասցէն է—
Calle Zellarayou 1100, Buenos Aires,
Argentina,

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Գ. ՏԱՐԻ

ՀԱՆԷՊ, 28 ՅՈՒՆԻՍ, 1930

ԹԻՒ 11

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Գոհունակութեամբ կ'արտատպենք հետեւեալ մասերը «Սիոն»ի այս տարուան թիւ 6ին մէջ հրատարակուած «Համերաշխութիւն» խորագրով մէկ խմբագրականին: Տարի մը առաջ այս էջերուն վրայ (տե՛ս «Նոր Աւետարեբ» Բ. տարի թիւ 15) ճիշդ այդպիսի գործակցութեան թեզը պաշտպանուած էր, իբր անհրաժեշտ պայման ընդհանուր Հայ կեանքին բարձրացման:

«Սիոնի Սրբազան խմբագրապետը հայ իրականութեան մէջ կրօնքի ներքին և արտաքին թշնամիները մատնանը չելէ վերջ կը շարունակէ. —

Որպէսզի աշխարհը խարբաւող կրօնական անտարբերութեան և անհաւատութեան դէմ հայ եկեղեցիներ կարող ըլլան պաշտպանուիլ, պէ՛տ է որ անոնք համեարաշխ գործակցութիւն մը ստեղծեն իրենց մէջ, (ընդգծումը մերն է) մէկ ճակատ կազմելով հասարակաց թշնամիին դէմ:

Վասնզի այնպիսի կարեւոր խնդիրներ կան այսօր հայ ժողովուրդի կեանքին մէջ, կրօնքի եւ եկեղեցւոյ տեսակէտներէն որ միեւնոյն են բոլոր յարանուանութիւններու համար: Այսպէս անտարբերութիւնը, անհաւատութիւնը, նոր սերունդին կրօնական դաստիարակութիւնը, եկեղեցի երթալու պատճառ, կիրակիի պահպանութիւնը, սեռային սրբութիւնը, (ընդգծումը մերն է) գլխաւորներէն քանի մը կէտեր միայն յիշած ըլլալու համար, որոնք հառաքակաց են, այսինքն՝ վտանգը հաւատարկաց վտանգ է բոլոր եկեղեցիներուն համար ալ:

Արդ, միջկեղեցական հասկացողութեամբ և կրօնական համերաշխ գործակցութեամբ միայն կարելի է հեռացնել այդ վտանգը:

Եւ որպէսզի հնարաւոր ըլլայ գործակցութեան ապահով գեանի մը վրայ քով քովի գալ, հարկ է հրաժարիլ մարդաստեղծեան բոլոր յայտնի և գաղտնի կերպերէն...: Ասեմք մարդ իր եկեղեցւոյն մէջ բող մնայ, և իր եկեղեցւոյն մէջ ցոյց տայ թէ ինքն է ընկալի փոխանակայն (ընդգծումը մերն է):

Եւ առաջին գործակցութիւնը կրնայ իրականութիւն մը ըլլալ Հայաստանեայց եկեղեցւոյ և Հայ Բողոքական եկեղեցիներու միջև:

Մենք հաճոյքը ունեցանք Զատկի շաբթուն Ս. Յակոբի մէջ ողջունելու հայ Բողոքականութեան յայտնի դէմքերէն Վեր. Մ. Փափագեանը, որ շատ շահեկան տեսակցութիւն մը ունեցաւ հոգեւոյս Գործիքի Սրբազանի հետ, և իր հիւսցումը յայտնեց Ս. Պատրիարքի մասին՝ ծանօթանալուն համար այնքան լայնախոհ և քրիստոնէական բարձր տեսիլներով օժտուած բարձրաստիճան հոգեւորականի մը, որ արածնեց զինքն իր ըսածները կրկնելու Սուրբոյ Հայ Աւետարանական եկեղեցիներու Միութեան ժողովին մէջ, Պէշրոյթ:

Ուրախ եմք նաեւ որ նոյն իսկ Ամերիկայի եկեղեցիներու արդի վարիչները մեծ պատասխանատւութիւն տեսնելու հետեւ իրենց հետեւին իրենց հետեւին (ընդգծումը մերն է):

Յայտնելէ հաջորդ թէ Ամերիկայէն միսիօնարի տեղ օգնութիւն կը շնորհեն կը վերջացնէ սապէս. —

Երբ Ամերիկայ կ'օգնէ մեզի, ինչո՞ւ

հայ եկեղեցիներն չօգնեն իրարու, ստեղծուած նորագոյն պայմաններու մէջ վեր բռնելու համար իրենց Աւետարանն ու Քրիստոնէութիւնը:

Ներքին համերաշխութիւն եւ գործակցութիւն, այս պէտք է ըլլայ այսօր Հայ ժողովուրդին նպատակը, կրօնական գիտնի վրայ իր կորուստներուն տեղը լիցնելու և միանգամայն իրենց եկեղեցիներուն սպառնացող ներքին վտանգներուն առաջը առնելու համար:

ՊԱՏԳԱՄՆԵՐ

ԵՐԿՐՈՐԴ ՄՂՈՆԸ

Վեր. Մանասէս Փափագեանի
խառնակերուն խօսքունը

«Եւ ով որ քեզ պահակ բռնեալ ու մղոն մը ճակարակ քէ, զընա անոր հետ ետիր:» Մատթ. 5. 41: «Կիրենացի մարդ մը գտան Սիւնոն անունով, զանկիս պահակ բռնեցին որ խաչը վերցնէ:» Մատթ. 27. 32:

Վեր. Փափագեան բացատրել է ետքը թէ «պահակ բռնելի տեղ յունարէն բընագրին մէջ գործածուած է անկարիս բառը, որ պարսկերէնէ և փոխ առնուած է շատ մը լեզուներու կողմանէ և որ կը նշանակէ պարտադիր ծառայութիւն, ըստ. «Այսօր կատարեալ ազատութիւն չկայ, և չի կրնար ըլլալ: Մարդը իբր ընկերութեան մէկ մասը ստիպուած է կատարել շատ մը պարտադիր ծառայութիւններ ընկերութեան մէջ իր զիրքը պահել կարենալու համար: Ամէն տեսակ օրէնքները, հանրային կարծիքը, ընկերային սովորութիւնները, ամէն տեսակ հաստատութիւններն ու կազմակերպութիւնները որոնց կ'անդամակցիս քեզմէ կը պահանջեն պարտադրեալ ծառայութիւններ, զորոնք կամայ ակամայ պիտի ընես քու զիրքդ չկորսնցնելու համար: Եւ երբ այս պարտադիր ծառայութիւնը ընես քայտ կ'ըլլաս առաջին մղոնը: Մովսէսի Օրէնքը մեզ կը տանի մինչեւ առաջին մղոնի վերջը: Բայց Ա-

ւետարանը հոն չի կենար եւ մեզ կ'առաջնորդէ մղոն մ'ալ հեռու, ոչ թէ պարտադրեալ այլ կամաւոր կերպով:»

Ապա ասիկա լուսարանեց չորս գործնական օրինակներով:

Մարդկային ընկերութիւնը կը պարտադրէ որ որոշ չափով պարկեշտ եւ մաքուր ըլլանք: Այս առաջին մղոնը պէտք է քաւել բայց Քրիստոս կ'ըսէ. «հոն մի՛ կենար. պէտք է մղոն մ'ալ քաւես», որ է սրբութիւն, կատարեալ կոյս հոգի:

Ուէ մէկը որ կ'ուզէ ընկերութեան մէջ ապրիլ պէտք է փափկանկիւս եւ քաղաքիւս ըլլալ: Բայց Աւետարանը անով չի գոհանար, պէտք է նաեւ ըլլալ սիրող: Սէրը երկրորդ մղոնն է:

Բոլոր մարդիկ կ'ուզան, չեն կրնար չտալ քանի ընկերութեան մէջ կը գլտուելին: Բայց ասիկա բաւական չէ: Ոմանք կը ջատագովեն տառանորդի դրութիւնը, որ սակայն աւետարանական չէ որքեք. Մովսէս այդպէս կը պարտադրէր և ո'չ թէ Քրիստոս: Տալու մէջ քրիստոնեայի համար սահման չկայ. ասիկա կուտայ այնչափ մինչեւ որ իր թոքէն կաթիլ մը արիւն իսկ հոսի: Ասիկա տալ չէ այլ՝ զոհողութիւն, որ է երկրորդ մղոնը կիսանքի:

Պաշտամունքի մէջ ևս կան առաջին և երկրորդ մղոնները: Շատ մարդիկ եկեղեցի կուզան, աղօթածողովներու կը մասնակցին: Ասիկա հրապարակային պաշտամունք է, որուն մասնակցելու պարտադրուած են իրենց քրիստոնեայի համբաւը չազարտելու համար: Բայց ասկէ անդին երկրորդ մղոնը կայ, զոր պէտք է կատարես ազատ կամքով. այս է անձնական աղօթքի առանձնաբերական մեջ:

Բոլոր կրօնները մարդերը կ'առաջնորդեն առաջին մղոնի մէջ, որ պարտադրեալ կենքն է: Քրիստոսն է որ մեզի կը բանայ երկրորդ մղոնի ասպարէզը: Կիրենացի Սիմոն պարտադրեալ կրեց խաչը Գողգոթայի ճամբուն վրայ, որ առաջին մղոնն էր. որ, սակայն պատճառեալ որ ետքը քրիստոնեայ դառնայ և իր երկու որդիները Հովովի եկեղեցիին կարեւոր անդամները ըլլան: Առաջին մղոնը արժէք ունի երբ մեզ առաջնորդէ երկրորդին:

Հայկ, 22 Յունիս, 1930

ՅՕԴՈՒԱՄԵՐ

1900ԴԴ. ՏԱՐԵԴԱՐԶ

ՊԷՆՏԷԿՈՍՏԷԻ ԵՒ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԾՆՆԴԵԱՆ

«Լուսաւորեալ Երուսաղէմ, զի հասեալ է յոյս քո, զարդարեալ զամուրս քո. եւ փառք ի վերայ քոյ ծագեացի»:

Այս տարի, 1930, ՊԷՆՏԷԿՈՍՏԷԻ և ԵԿԵՂԵՑԻՈՅ ԾՆՆԴԵԱՆ 1900ԴԴ. տարեգարձն է: Աշխարհիս բոլոր քրիստոնեայ եկեղեցիները այս Հոգեգալստեան մեծ Յորդանանը վայելուչ կերպով տօնելու կը պատրաստուին:

Տարին անգամ մը, Չատիկէն 50 օր վերջը, եկեղեցիներ կը վերջիշեն Հոգեգալստը: Այդ կիրակին յիշաւի Եկեղեցիին համար մեծ օր է, իր ծննդեան տարեգարձը, քանի որ Հոգին Սուրբ այդ օրը եկաւ. ու այդ օրը կազմուեցաւ, հիմը դրուեցաւ Եկեղեցիին: Այդ օրը Եկեղեցիին սկզբնաւորութիւնը եղաւ 3000 ու 5000 նուիրեալ հաւատացեալներով:

Այսօր աշխարհիս Ժողովուրդին մէկ երրորդը այդ կրօնին կը վերաբերին: Այս օր՝ 1600 տարի շարունակ աճող Քրիստոնեայ ազգերն են որ կը տիրեն աշխարհիս երկու երթորդին, ու համայն աշխարհը այսօր այդ մեծ Քրիստոնէական կրօնի ու Եկեղեցիին ազդեցութեան տակ, անոր օրհնութիւնը կը վայելին:

Ամերիկայի մէջ Պենտեկոստի 1900ԴԴ. տօնակատարութեան առթիւ բոլոր եկեղեցիները ու յարանուստութիւններ մէկ են, միաբան ու միացեալ են իրենց ծագումը յիշելու և տօնելու: Ահա՛, այս տարին, մեծ Յորդանանական տարի է. ՊԷՆՏԷԿՈՍՏԷ, ՀՈԳԵԳԱԼՈՒՍԸ: Հոս կեդրոնացուցած են իրենց ոյժն ու ուղադրութիւնը, ու մեծամեծ պատրաստութեամբ ՀՈԳԵԳԱԼՍՏԵԱՆ կը սպասեն...

ՄԵՆՔ. Քանի որ եկեղեցիներ իրենց տարբեր անկիւններէն իրենց լու-

սարձակը կը կեդրոնացնեն հոս—մասնաւոր զիրքեր վրած են ու դեռ տպուելու վրայ են, պարբերաթերթերով, շըրջաբերականներով, բեմով, օրաթերթերով ալ իրենց մասնաւոր ծրագրերը Ժողովրդականացնել կ'ուզեն. հիմակուրն է կ'աշխատին դէպի եկեղեցական եւ ընդհանուր պատմական այս մեծ դէպքին դարձնել ուղադրութիւնները, եւ վարել միաբերն ու սրտերը:

Մանաւանդ, ոչ թէ այս Պենտեկոստի տարին լոկ հասարակ տօնական մեծ տարի ընել կուզեն, այլ իրապէս, գործնականապէս Պենտեկոստի տարի—այսինքն Հոգիին վերապալստեան տարին ընելու նպատակ ունին: Անոր վերստին գալուն, այցելութեան, հեղեղման օրհնութիւնները վայելելու համար ճամբաներ կը պատրաստեն...

Մենք, ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՍ, Առաքելական և Աւետարանական, տաբակոյս չունիմ թէ մեծ ուղադրութեամբ լարուած կը հետեւին մեր դրացի քոյր եկեղեցիներուն պատրաստութիւններուն, այս վե՛ծ յոբելեան տարին համար, և ոչ միայն օգտուիլ ու օրհնուիլ կուզեն անոնցմով, այլ մանաւանդ ալ աւելի անոնց հետ եւ անոնցմէ աւելի Արեւելեան Առաքելական և Պէնտէկոստէական միսթիկ եկեղեցիներու պատշաճ եւ վայելուչ կերպերով ձեռք կ'առնեն այդ խնդիրը, ու իրենց ալ օրհնութեան միջոց ընելու կը պատրաստուին հիմակուրն է մասնաւոր ծրագրերը մշակելով:

ԻՆՉՈՐԻ ԶԷ— Կենաց աղբիւրէն անգամ մը ևս խմել լիառատ, անգամ մը ևս մկրտուիլ Սուրբ Հոգիով, անգամ մը ևս վերականգանանալ ու զառնալ այդ նախատիպար եկեղեցական հաւատացեալի ապրումներուն... ՏԷՐՈՋԸ ԸՆԴՈՒՆԵԼԻ ՏԱՐԻՆ հոշակել 1930ը:

ԻՆՉՈՐԻ ԶԷ— Քրիստոնէական եկեղեցիներու աղօթքը այդ վերջին օրերու անձրեւին չէ՞-որն է հալմանը, կարեւորագոյնը,

տօնին բուն նպատակը, Բարեկարգութեան բուն ազդակը:

Այսօր մարդիկ կ'ուզեն դառնալ այդ իրական Բրիտոնէական եղբայրակցութեան կեանքին, որուն պակասէն աշխարհը մոլորած անառակի կեանք կ'ապրի... Այսօր իզուր կ'որոնէ այդ ճշմարիտ եղբայրակցութիւնը Լօզանի Գօնֆէրանտով, Ազգաց Լիկայով, Լոնտոնի Ժողովով... Պօլշէվիզմով կամ Փաշիվմով...:

ՆՈՐ ՊԵՆՏԵԿՈՍՏԷԻ Է ԱՇԽԱՐՀԻՍ ԱՅԺՄՈՒ ՊԵՏԲԸ: Այս է Պէնտէկոստէի (1930)* տարուան նշանակէտը:

Փիլասկիս (Շար.) Կ. ԱՏԱՆԱԼԵԱՆ

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ ԵՒ ԸՆԿԵՐԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ

Գ. ՔՐԻՍՏՈՍ ԵՒ ԴՊՐՈՑ

(Շար. նախորդ թիւէն եւ վերջ)

5. Կրօնական դաստիարակութիւնը պիտի հետևի նախ պէտք է գիտնալ թէ որո՞նք են քրիստոնէութեան սկզբունքները. քրիստոնէութեան նպատակն է անհատներու երջանկութիւնը, մարդկային գոյութեան շարունակումը, անոնց բարոյականին բարձրացումը, եկեղեցիին ընդարձակումը եւ զօրացումը: Այս պատճառաւ կրօնքը անտեսող ազգերը պէտք է գիտնան որ իրենց ձեռքերով իսկ ի-

*Քրիստոս աշխարհիս վրայ 34 տարի ապրեցաւ, իր համբարձումէն 10 օր ետքը պատահած ՊէնՏԵԿՈՍՏԷՆ գալու է ուրեմն 1934-ին: Մենք ինչո՞ւ 4 տարի կանուխ կը տօնենք այդ մեծ դէպքը:

Յամի Տեառն 526ին Դիոնիսիոս անուն վանահայր մը Յիսուսի ծննդեան տարին հաշիւ ըրաւ, գտաւ որ Յիսուս ծնած է Հռովմայ շինութեան 754 թուականին: Բայց պատմութենէ ետքը գտան թէ Յիսուս՝ ոչ թէ Հռովմայ շինութեան 754ին, այլ 750ին ծնած է: Հոս 4 տարի սխալած էր, պակաս հաշիւ ըրած էր: Դիոնիսիոս Հռովմայ շինութեան 750րդ տարին քրիստոնէական տոմարին մէկը ըսելու տեղ 754րդին մէկ ըսաւ: Կ. Ա.

րենց գերեզմանները կը փորեն՝ հակառակելով կրօնական դաստիարակութեան կամբողջովին զանցառնելով զայն եւ կամ քաջալերելով անկրօնութիւնը: Երկայ սերունդը պէտք է կրօնապէս դաստիարակուի. ասոր համար բազմազան միջոցներ կրնան գործածուիլ, որոնցմէ կըրնանք յիշել հետեւեալները. ազգային դպրոցներ, Կիր. Դպրոցներ, քրիստոնեայ ընտանիքներ, անհատական քրիստոնէական օրինակելի կեանքեր, քարոզական այցելութիւններ, մասնաւոր ժողովներ եւ այլն:

6. Հանրային դպրոցներ

Եկեղեցին մայրն է նախնական եւ բարձր վարժարաններու: Դպրոցներու պատգամն է Քրիստոս, իսկ անոնց կըրթութիւնը՝ անհատներու տուած արժէքը եւ Աստուծոյ թաղաւորութեան հոգին:

Սակայն շատ ցաւալի է տեսնել որ տակաւին նոյնիսկ քրիստոնեայ ազգերու մէջ շատ մը անուսներ կան: Ասիկա ազգի մը համար վտանգաւոր վիճակ մ'է: Շիւրջ կ'ըսէ. «Աստուածներն իսկ զուր տեղ կը պայքարին տգէտներու դէմ»: Ցաւալի է իբր իրողութիւն տեսնել թէ դպրոցներու թիւը անբաւարար են, ուսումնական ծրագիրը ընդհանուր պէտքերն անհամապատասխան է, ուսուցիչները պէտք եղած չափով չեն քաջալերուիր, ուսուցիչները ճշմարիտ դաստիարակութեան մասին տգէտ են: Կրթութեան բուն նպատակն է սորվեցնել թէ ինչպէ՞ս պէտք է խորհիլ եւ ոչ թէ ինչ պէտք է խորհիլ: Ուսուցիչը աշակերտին համար չափաւ խորհիլ, այլ աշակերտին խորհիլ պիտի սորվեցնէ:

Բարձր դպրոցներու մէջ կրթութիւնը պէտք է ազատ ըլլայ կրօնական, գիտական, քաղաքական տեսութիւններ ներկայացնելու մէջ, ճշմարտութեան խուզարկումին մէջ անիկա պէտք է յուսալանայ մինչեւ հոն ուր միտքն ու խիղճը կրնան առաջնորդուիլ: Աշակերտը պէտք

չէ արգիլուի նոր ուղիներու մէջ քալելէ և պէտք չէ ասոր համար հալածուի: Բըրիստոնէական հոգին, այսինքն սէր, յարգանք, կարգապահութիւն, մաքրութիւն, փափկանկատութիւն, ներդաժտութիւն, պէտք է տիրող ըլլայ բարձր հաստատութեանց մէջ:

Այսուհանդերձ ազատութիւնն ալ սահման մ'ունի. ազանդամտութիւնը եւ տոկոսապաշտութիւնը պէտք չեն ուսուցուիլ և անաստուածութեան մասին պէտք չէ դատաւորի հովեր առնելու թոյլատրել:

Պէտք է ուշադրութիւն ընել երկու հիմնական ճշմարտութիւններու. 1. Աշակերտներու անձնաւորութիւնը և նկարագիրը բարձրացնել, 2. Աշակերտները քարոզչութեան կամ հոգեւոր պաշտօնի պատրաստել:

7. Գրքեր և գրադարաններ

Վերջին պեղումները կը ցուցնեն թէ հին ազգերը մեծ գրադարաններ ունէին, Սինակոնիերու և տաճարներու մէջ գրքեր կային: Չենք գիտեր թէ Յիսուս գրքեր ունէ՞ր. բայց Պօղոս ունէր. Բ. Տիմ. 4. 13:

Աշխարհս բարիքը չի գնահատեր. անիկա գիտնալ չ'ուզեր թէ եկեղեցին էր որ յունահռոմէական գրականութեան մնացորդը 375 թուականէն ի վեր պաշտպանած է դարերու փոթորիկներու մէջէն: ԺԵ. եւ ԺԶ. դարերուն մէջ եկեղեցիներն ու վանքերը դպրոցներ եղան, իսկ վանականներն ու բողոքական բարեկարգիչները՝ ուսուցիչներ:

Մենք ալ գրքեր և ժողովրդային գրադարաններ պէտք է ունենանք, որոնք պէտք է բարոյական թոյնէ զերծ՝ միսիօնարական եւ ընկերային նիւթերու ուսումնասիրութիւնը քաջալերեն: Թերթերը, ուրիշ ամէն տեսակ հրատարակութիւնները, ներկայացումները լաւ կրթիչ ազդակներ կրնան ըլլալ. բայց անոնք՝ բարոյականը վերացնող եւ հո-

գին ազնուացնող տեսակէն պէտք է ըլլան եւ եկեղեցիին հսկողութեան տակ պէտք է կատարուին:

Զանդե

Յ. ՇՆՈՐՀՕՔԵԱՆ

ՎԵՐ. ՈՒ. Ն. ԶԵՅՄՊԸՐՍ

Իրա՞ն է որ երիտասարդներու մէջ ծերունին այն է ինչ որ է աւերակ մը ամուր չէնքերու մէջ: Բայց Պաալպէք ալ աւերակ մըն է, որուն մէջ ընտանիք մ'իսկ չի բնակիր, և զոր, սակայն, աշխարհի ամէն կողմէն շրջիկներ տեսնելու կուգան: Գերմանիոյ վերջին կայսրն ալ զայն այցելած և կարգ մը նորոգութիւններ ւրած էր և ասոր յիշատակին մարմարէ տախտակ մը դրած էր հոն: Պաալպէք յարգանքի արժանի է, քանզի իրեն յատուկ ունի ուշադրաւ պատմութիւն մը:

Մենք ալ այսօր երկու ծերերու, օտքերն ու ձեռքերը դողողջուռ, խօսելու անկարող, մտիկ ընելէ յոգնող երկու անձնաւորութեանց, շուրջը հաւաքուած ենք կատարեալ ակնածանքով: Հանգիսական մը իրաւունք ունի հարցնելու թէ որո՞նք են այս անձերը:

Նախ պէտք է խոստովանինք որ չունինք մէկը որ զանոնք, մանաւանդ Տր. Զէյմպըրսը գիտցած ըլլայ: Թէպէտ ես ասկէ 31 տարի առաջ առաջին անգամ շլլալով գոյն ճանչցած եմ և 27 տարիներէ ի վեր բաւական մօտ յարաբերութիւն ունեցած եմ իրեն հետ, իր ուրիշ բարեկամներուն հետ ես ալ պէտք է խոստովանիմ որ անկարելի եղած է իր մօտին իրմէ ծանօթութիւն մը ստանալ: Իր բոլոր ծառայութիւնները մարդերէն ծածկած է կզպուած դրամարկղի մը պէս:

Իր երկու դուստրերուն հնարամտութեանց կը պարտինք «Ճամբորդութիւն» անուն հատորի մը հրատարակութիւնը, որուն մէջ, սակայն, Տր. Զէյմպըրս աշխատեր է ցուցնել քան թէ երեւալ:

Այսու հտնդերձ՝ մեր թերի ծանօթութիւնները հաւաքելով Տր. Ձէյմպլըսի երկրային կեանքը երեք շրջաններու կրնանք բաժնել. 1. Ամերիկեան շրջան. 2. Կարինի մէջ իր գործունէութիւնը. 3. Ատանայի մէջ իր ծառայութիւնը:

Ա. Շրջան

Իր Ամերիկայի մէջ անցուցած կեանքին մասին սաչափ միայն գիտենք. Տր. Ձէյմպլըս ծնած է 22 փետր., 1853 ին Կանատայի մէջ Իրլանտացի բարեկեցիկ ընտանիքի մը մէջ, բարեպաշտ հօրմէն և սրբակեաց մօրմէն: Հաճելի է հոս յիշել թէ ինքը ծնած է Ծօրճ Ուաշինկթընի ծննդեան օրը: Իր պապը թէպէտ փափաքած է որ նա բժշկական ասպարէզը մտնէ, սակայն, ընտանիքին հոգեւոր մթնոլորտէն այնքան ազդուած է որ իր միւս երեք եղբայրներուն նման ինքն ալ մղուած է հոգեւոր գործի մասնէ: 1876 ին Փրինսթըն Աստուածաբանական ձեմարանը աւարտելէ վերջ եկեղեցիի մը մէջ գործած է, ուր ամբողջին բարի վկայութեան արժանացած է: Մինչ կը պատրաստուէր իբր միսիօնար Ճարսոն մեկնիլ, նախախնամութիւնը զինքը դէպի Կարին առաջնորդած է: Նոյն տարին իր հայրը և երկու քոյրերը մեռած են:

Բ. ՇՐՋԱՆ, ԿԱՐԻՆԻ ՄԷՋ

Կարինի մէջ 1879ին սկսած է գործել: Այս շրջանը 1879ի Րուս. Թըրքական պատերազմէն զեւ նոր դուրս ելած և գրեթէ աւերուած էր: 1894ի մէջ Սասուն սկսած և 1895-96ի միջոցին շարունակած ջարդերու ընթացքին բազմաթիւ տուներ աչրած, գիւղեր աւերուած, անթիւ աշխարհիկ և օրբեր անօգնական մնացած էին: Ուստի Տր. Ձէյմպլըս անոնց օգնելու նպատակով երկրին ամէն կողմերը շրջելու սկսած է: Այս ճամբորդութեան ընթացքին՝ աղոտ օթեւաններու և ախարներու մէջ գիշերած է, իր ձիուն

հետ միեւնոյն խցիկին մէջ քնանալով, ոջիւններու և լուերու մէջ տապալակելով, ասկէ զատ ցեխի նման ջուերի խմիւս հարկին տակ լայնալով: Այն՝ գիշերները պահապանի մը նման հսկեր և քանիցս՝ իր հզօր ու արական ձայնով՝ գողեր փախցուցեր է: Օր մը նոյնիսկ զինքը հիւրասիրող տանուտէրը փորձած է կողոպտել զայն, զոր դժուարաւ կրցեր է արգիլել: Փոսի մը մէջ 400 հայ սպաննուածներ կը թաղէին, այդ առթիւ հոն գտնուող Տր. Ձէյմպլըս, հայ կնոջ մը ներպայցիներու ուղղուած անէծքին նշաւակ եղած է. մէկ անգամ մըն ալ՝ բանտէն ազատուած քահանայի մը օրհնութեան արժանացած: Զերոյէ 12-14 աստիճան վար ցուրտով՝ ձմրան բուքին կուրծք տուած է: Օր մը՝ մակերեսը սառ կտրած գետի մը վրայէն անցնելու ատեն, գետին երեսի կեղեւը կտրած և այն՝ ձիուն հետ, իր հագուստներով գետը թաղուած է և դժուարաւ ազատած:

Վերջապէս՝ Կարնոյ և շրջակայից մէջ անցուցած 20 տարիներու ընթացքին «ամէն կողմ շրջած և բանիւ ու գործով աւետարանած է զժբախտ ժողովուրդին մէջ:»

Այս ժամանակամիջոցին, պատեհութիւնը կ'ունենայ ուսումնասիրելու Հայ, Քուրտ և Թուրք ցեղերու բարի և յոռի մասնայատկութիւնները, որով յառաջիկային անոնց մասին արտայայտուելու արժանիքը կ'ստանայ:

(Շար.) Ս. Ս. ՄԱՆՈՒԿԵԱՆ*

Կ. Շրջանը յաջորդիւ

*Այս գրութիւնը կարդացուած է Վեր. Ս. Ս. Մանուկեանի կողմանէ, Վեր. Տր. Ու. Ձէյմպլըսի ծննդեան 75րդ տարեդարձին առթիւ սարքուած հանգէսին մէջ Ա. Հայ Աւետ. Եկեղեցիին սրահը, Պէյրութ:

Ծ. Խ.

ՄԱՀԱԹՄԱԿԱՆՏԻ (3)

Իր ըմբռնումներուն և ապրելակերպին մէջ Կանտի կը նմանի Թօլսթոյին: Կանտի և Թօլսթոյի մէջ նմանութեան ուշագրաւ կէտեր կան, թէպէտ և երբեմն կէտերու մէջ իրարմէ էապէս կը տարբերին: Կանտի Թօլսթոյէն աւելի մեղմ, հանդարտ և հեզահամբոյր է: Կանտի հնդիկ դաւանանքին ներքեւ աւետարանի սիրտ մը կը բաբախէ: Ան կ'ընդունի հնդիկ Ս. Գիրքը, նոյն ատեն չի մերժեր Աստուածաշունչը, Գուրանը, Ջէնդապետան, և կ'ընդունի անոնց ալ Աստուծոյ ներշնչութեամբ ըլլալը: Ան շարունակ կը կարդայ Նոր Կտակարանը եւ հիացող մըն է Յիսուսի: Եւ անկա շատ մը անուանական քրիստոնեաներէ աւելի Յիսուսի անկեղծ մէկ հետևորդն է: Անգլիացի կղերական մը անգամ մը անոր հարցոյց. «Որ գիրքը ամենէն շատ քու վրադ ազդած է». և նա պատասխանեց. «Նոր Կտակարանը»: Կանտի կը խոստովանի թէ ՓէՍԽՎ ՐէՋիՍԹէն գաղափարականը Յիսուսի լերան վրայի քարոզէն ստացած է:

Կանտի կը հաւատայ հնդկական իւրայատուկ քաղաքակրթութեան բարձրութեան: Եւ կը հաւատայ թէ Հնդկաստան ունի սրտը և կարևոր ընծայութիւն մը աշխարհի քաղաքակրթութեան: Նա կը հաւատայ թէ Հնդկաստան գերադաս մշակոյթի (քըլչըր) մը նմոյշը պիտի տայ աշխարհին: Կանտի կը մերժէ Արեւմտեան քաղաքակրթութիւնը, եւ խոստովանէ կը քննադատէ ու կը ձաղկէ Արեւմտեան աշխարհի դրամատիւրական եւ աշխարհակալական ոիսթէմը: Նա կը պնդէ թէ Արեւելքի մէջ հոգիի գերադասութիւնն է որ կը տիրէ, իսկ Արեւմուտքի մէջ դրամի և բռնութեան բիրտ ուժը: Իր յօդուածներէն միոյն մէջ նա կը գրէ. «Վերջին պատերազմը ցուցադրեց, աւելի քան երբեք, սատանայական բնոյթը

այդ քաղաքակրթութեան որ այսօր Եւրոպայի վրայ կը տիրէ: Հանրային բարոյականութեան ամէն մէկ կանոնը կոտորուեցաւ յաղթողներու կողմէ, յանուն առաքինութեան: Ոչ մէկ սուտ այնքան՝ վատթար չնկատուեցաւ որ չխօսուի: Ամէն մէկ ոճիւրի ետեւ կեցող գրգիռը կրօնական կամ հոգեւոր չէ, հապա բովանդակօրէն նիւթական... Եւրոպան այսօր միայն անուանապէս քրիստոնեայ է: Իրականութեան մէջ այն կը պաշտէ Մամոնան»:

Կանտի պատերազմէն առաջ երեսու երեսու հազար ճերմակ ցեղի քաղաքակրթութեան հետ, զոր կը յորջորջէ «մեծ մոլութիւնը»: Կանտի կը հաւատայ թէ Եւրոպան դրամը կը պաշտէ եւ ներքին առաքինութեանց մշակութով չի հետաքրքրուիր, հոգեկան ազնուութեան մշակոյթի մէջ չի փնտռեր իր հաճոյքը և զոհունակութիւնը: Քաղաքակրթութիւնը, Արեւմտեան իմաստով, կը նշանակէ զժոխք տկարին եւ աշխատաւոր գաստկարգին համար: Ան կը ծծէ ցեղին կենսունակութեանը: Հնդկաստանի նըպատակը ըլլալու է մերժել Արեւմտեան քաղաքակրթութիւնը:

Արեւմտեան քաղաքակրթութեան մէջ Կանտի ամենէն շատ հակառակած բաներէն մին մեքենան (միշինըրի) է: «Երկաթէ դար, երկաթէ սիրտ», մեքենան եղած է ներկայ դարու հրեշային կուռքը: Մեքենականութիւնը ազգերը գերող մեծ մեղքն է եւ դրամը թոյն մըն է, այնքան որքան տոփանքը»: Ուստի Կանտի կը յանձնարարէ որ Հնդկաստան մեքենականութիւնը մերժէ եւ մեքենաները երկրէն դուրս վըտարէ, ձեռահիւս կերպասներ հագուի և իր հանդերձեղէնները չինէ ջարհակով:

Բրիտանական կառավարութիւնը աւելի զգայուեցաւ անոր տնտեսական հարուածէն, քան անոր քաղաքական յարձակումներէն:

Անգլիոյ փոխարքային գրած անձնական և անվեհեր նամակներէն մէկուն մէջ նա կը գրէ. «Ես ոչ յարգանք եւ ոչ սէր կրնամ տածել կառավարութեան մը հանդէպ որ յանցանքին վրայ յանցանք կը բարդէ իր անբարոյականութիւնը պաշտպանելու համար: ... Կառավարութիւնը պէտք է մղուի ապաշխարութեան»:

Փոխարքան Կանտիի պատասխանեց աւելի բռնութիւն բանեցնելով:

Կառավարութեան գէմ Կանտիի գործածած ամենաազդու զէնքը ոչ գործակցութիւնն (նըն-քոսփըրէյըն) եղաւ: Կանտի ծանոյց Յուլիոս 20, 1920ին, թէ ոչ-գործակցութիւն պիտի հրատարակուի Օգոստոս 1ին եւ իրր կանխապատրաստութիւն, նա հրամայեց որ նախորդ օրը յատկացուի աղօթքի եւ ծոմապահութեան, Կանտի ժողովուրդին հրամայեց խիստ օրինապահութիւն, քանզի անոր ամէնէն շատ վախցած բանը անգլոսպելիի խուժանավարութիւնն է:

Կանտի՝ Անգլիացիներուն ուղղելով իր խօսքերը, կը գրէ. «Ոչ-գործակցութիւն կը նշանակէ ոչ պակաս քան անձնագոհութիւն: Եւ կը յուսամ ձեզի յաղթել իմ տառապանքով:»

Ասկէ տարի մը հոգ, 1922ին, Չանրի-Չանրայի մէջ ուրիշ խռովութիւն մը տեղի ունեցաւ: Ոստիկաններ ժողովուրդին վրայ կրակ բացին և անոնց ռազմամթերքը հատնելէն հոգ՝ ամբոխն ալ փոխադարձաբար զիրենք ջարդեց և այրեց: Այս զէպքէն քիչ առաջ, Կանտի փոխարքային խիստ վերջնագիր մը ղրկած էր, պահանջելով անմիջական բարեկարգութիւն: Այս ջարդին համար Կանտի անձնապէս պատասխանատու չէր բայց այս մոլեգնութեան համար ժինչեւ հողին ցնցուեցաւ: Այս վայրագութեան համար անոր սիրտը խոցուեցաւ և աւրիւնեցաւ: Եւ անիկա իր վրայ առաւ իր ժողովուրդին մեղքերը: Նա խղճայ

անհնազանդութեան շարժումին սկսելուն համար: Եւ թէ և իրեն համար մեծ անուանարկում մըն էր, ան խոնարհաբար, «Երեկ ինտիմ» թերթին մէջ հրապարակային խոստովանութիւն ըրաւ եւ այդ յանցաւորներու բռնած ընթացքին համար հրապարակային հերոս մնողից: Եւ թափուած արիւնը քաւելու համար ինքզինքը պատժեց եւ իր անձը հինգ օրուան ճգնութեան և ծոմապահութեան ենթարկեց:

Այս արարքին մէջ արտայայտուեցաւ Կանտիի գերազանց մեծութիւնը: Ան յայտնեց թէ՛ ինք զերծ է սին փառասիրութենէ եւ պարծենկոտութենէ: Ան զիջեցաւ իր սխալը խոստովանելու եւ ինքզինքը խոնարհեցնելու: Կանտի միշտ խոնարհ եղած է. ժողովրդային պովասանքները իր գլուխը երեսք չեն գարծուցած:

Կանտի եղած է ոչ միայն խոնարհ, այլ նաեւ ներող: Ան իր սրտին մէջ երբեք դառնութիւն և ո՛ր չի պահեր: Չարականութիւն եւ վրէժխնդրութիւն անոր էութեան օտար բաներ են: Անոր հոգին անկեղծ սիրով համակուած է: Ան նոյնիսկ իր թշնամիներուն չարիքը չ'ուզեր: Երբոր կրնայ, չարիքը բարիքով կը փոխարինէ: Նա կը գործադրէ բարիքով չարին յաղթելու սկզբունքը:

«Հայ Սիրս» Բ. ԼԵԻՈՆԵԱՆ

(Շարունակելի)

ԾԱՄԲՈՒ ՆՕԹԵՐ (1)

(Վեր. Մ. Կ. Փափագեանի)

Այս նօթերու չսկսած յարմար է Վեր. Փափագեանը իր կենսագրութեան էական գիծերով ներկայացնել նոր սերունդին և

* Վեր. Մ. Փափագեան Միութեան վերջին տարեկան ժողովին մէջ, Պէյրութ, ամէն առաւօտ խօսեցաւ իր ուղեւորութեան պահուն անցած տեղերուն մասին, որուն մէկ ամփոփումն է այս գրութիւնը: Ծ. խ.

ուրիշ շատերու, որոնք միայն անուշով կը ճանչնան զայն:

1865 Փետր. 16ին ծնած է Վեր. Մ. Կ. Փափազեան, և 1882ին կ'աւարտէ իր գոլէճի դասընթացքը Այնթապի Կ. Թ. Գոլէճին մէջ: Մինչև 1886 ուսուցչու թեամբ կ'գրադի 4 տարի, նախ Ակն եւ ապա Այնթապի Կ. Թ. Գոլէճի մէջ: 1886ին Ամերիկա կը մեկնի իր ուսումը կատարելագործելու համար: 1889ին կ'աւարտէ իր աստուածաբանական դասընթացքը Եէյլ Համալսարանի Տիվինիթի Սքուլէն: Նոյն տարին, ամառուան 4 ամիսներուն միջոցին իբր քարոզիչ կը ծառայէ Նեպրասկա Նահանգին մէկ ժողովական եկեղեցիին մէջ: Եւ աշխատման քանի ամիսներուն միջոցին կը հետեւի յետընթացաւարտ դասընթացքի էնտովըր Աստուածաբանական Ճեմարանին մէջ: Քարոզչութեան հրաւեր կըստանայ Մէնչեսթը Նահանգին Բաւլի քաղաքին Ա. Ժողովական եկեղեցիէն, ուր հովիւ կը ձեռնադրուի և կը պաշտօնավարէ երկուք ու կէս տարի: 1892 ին կ'ամուսնանայ Միս Մէյրի Ի. Ֆոսթըր անուն Ամերիկացի օրիորդին հետ և նոյն տարին կը վերադառնայ իր ծննդավայրը, Այնթապ, ուր Հայիք հայ Աւետ. եկեղեցիին մէջ կը պաշտօնավարէ մինչև 1907, 15 տարի անընդհատ, կը շահի իրաւամբ պերճախօս բեմբասացի, ջերմ աւետարանիչի, կարող վարիչի, արգիւնաւոր և զօրաւոր գործիչի համբաւը, միինոյն ատեն 10 տարի շարունակ դասախօսելով Կ. Թ. Գոլէճի մէջ, որ այն ատեն իր փառքի շրջանը կ'ապրէր անգիրականացի և ուսուցչական հոյլի մը առաջնորդութեանը տակ: 1907ին ընտանեօք կը մեկնի դարձեալ Ամերիկա, ուր 6 ու կէս տարի Նիւ Եորք քաղաքին Հայ Աւետ. եկեղեցիին, և 15 ու կէս տարի Քալիֆորնիա, Ֆրէզնոյի Պանդրա-տաց Հայ Ժողով. եկեղեցիին կը ծառայէ իբր քարոզիչ և հովիւ: Անցեալ տա-

րի, Նոյեմբեր 5 էն ի վեր, կ'այցելէ Անգլիան, Ֆրանսան, Իտալիան, Թունստանը, Եգիպտոսն ու Պաղեստինը և հուսկ ուրեմն Սուրիան, գրեթէ ամէն օր խօսելով, առ նուազն մէկ, երբեմն 3—4 անգամներ, և խաղաղականի ափերէն սկսեալ մինչև Միջերկրականի եզերքը իր խօսքին հմայքին և անձնաւորութեան թովքին տակ պահելով ամէն անոնք, որ իրեն մտիկ ընելու կամ ուէ կերպով իրեն շփման գալու բախտը կ'ունենային:

Սուրիոյ և Լիբանանի հայաբնակ քաղաքներն ու աւանները պտըտելէ հոք կուզայ Հալէպ, ուր Հայ Աւետ. երկու եկեղեցիներու մէջ ամէն օր երկսեռ հոծ բազմութիւն մը կուզայ մտիկ ընելու իր պատգամներուն: Վեր. Փափազեան տակաւին անվթար կը պահէ իր ախորժալուր, զօրաւոր հնչող ձայնը, յըստակ առգգանութիւնը, անմրցելի սահունութիւնը մերթ հեղասահ եւ մերթ հեղեղանման, աւետարանչական ջերմ-ոտնգութիւնը, դաւանական ուղղափառութիւնը, զեղապաշտ խմորումը, անըսպառ ֆիզիքական մանաւանդ հոգեկան կորովը, որոնք միանալով աւելի ընդարձակուած սրտի մը, պաշարով աւելի ճոխացած մտքի մը և բազմապիսի պատասխանատու պաշտօններու և յարաբերութեանց երկարատեւ փորձառութեան մը մեղի կ'ընծայեն զէմք մը՝ որուն նմանները շնորհելու մէջ շատ ալ առատաձեռն չի գտնուիր ընտելունը:

Վեր. Փափազեան Ամերիկայի գործունէութեան մասին լաւ է որ ուղղակի իրմէ լսենք, որուն պատեհութիւնը ունեցանք իր Հալէպ հասած օրուան գիշերը, Ազիզիյէի Աւետ. եկեղեցիին վարի սրահը, իրին տրուած ընդունելութեան առթիւ:

«Ասկէ 22 տարիներ առաջ ձեզմէ բաժնուեցայ: Լերան ետեւը եղողը կուզայ բայց քարին տակ գտնուողը ետ

չի գար: Ինձմէ շատ աւելի լաւ մար-
դիկ այսօր քարին տակ կը գտնուին.
Իմ բաժանումս, որ արտօմութեան պատ-
ճառ եղած էր, շնորհք մը եղաւ: Տիկ.
Փափազեան առանց սեւէ գարմանումի
կատարելապէս բուժուեցաւ. հիմա բա-
ւական գիրքած է. այնչափ որ ձեզմէ
մէկը եթէ տեսնելու ըլլայ չի կրնար
ճանչնալ զայն: Շատ կը ցաւիմ որ ես
ալ քիչ մը գիրքած եմ:

Այնթապէ մեկնումիս պահուն մտա-
դիր էի ա'ւ ասկէ յետոյ Ամերիկեան ե-
կեղեցիներու մէջ գործել: Բայց Նա-
խախնամութեան կողմէ ուրիշ կերպ տը-
նօրինուած էր: Ամերիկա հասնելէս
ետքը առաջին անգամ գործեցի Նիւ
Եորքի Հայ Աւետ. Եկեղեցիին մէջ վեց
ու կէս տարի: Այս պաշտօնավարու-
թիւնս ինծի համար օգտակար եղաւ
հոգեւորապէս: Ժողովրդին հետ յարա-
բերութիւնս վերջին աստիճան մտեր-
մական եղաւ: Եւ երբ զգացի թէ ա'ւ
պէտք է բաժնուիմ* Ֆրէյնոյ գացի Հայ
Պանդխտաց Ժողովական Եկեղեցիին մէջ
գործելու, որուն հովիւն եմ մինչեւ հի-
մա: Ամերիկա գտնուած միջոցիս գրե-
թէ միշտ հայերէն քարոզած եմ, վերջին
15 տարիներու միջոցին 15 քարոզ չեմ
սուած թրքերէն լեզուով:

Մէկ տարուան համար Ամերիկայի
Հայ Աւետ. Ընկերակցութեան ներքին
քարտուղարը եւ ընդհանուր աւետա-
րանիչը եղայ. շատ շնորհակալ եղայ
այս առիթին համար: Ամերիկայի 10
նահանգներուն մէջ, Քալիֆորնիա, Ի-
լինոյ, Միչիկըն, Նիւ Եորք, Նիւ Ճրքոյի,
Փէնսիլվէնիա, Բօտ Այլէնտ, Քլէմէքսի-
քթ, Մէսէչուսէց, Նիւ Հէմփշայրի
մէջ 39 Հայ Աւետ. եկեղեցիները այցե-
լեցի, ուր հովիւները ինծի եզրայր ե-
ղան, կրօնական մասնաւոր պաշտա-
մունքներ կատարուեցան, նաեւ Աւետա-
րանչական Ընկ.ի համար զբամ հանգա-
նակուեցաւ: Այս գործը աւարտելէ

վերջը վերադարձայ իմ եկեղեցիս, Ֆր-
բէյնոյ:

Հիմա անհատական հանգամանքով
կ'այցելեմ եկեղեցիները: Փափաքս է
խաչեալ ցեղիս մնացորդը այցելիլ եւ
հոգեւորապէս օգնել անոնց: Նպաստ
բաշխելու չեկայ: Այս մարդին մէջ իմ
պարտականութիւնս ասկէ առաջ կատա-
րած եմ: Իմ եկեղեցիս այս նպատակաւ
բազմիցս տուած է առանց տրտնջալու:
Ամերիկայի մէջ մեր կարօտներուն ի
նպաստ կատարած շրջանիս* միջոցին
Ֆրէյնոյի եկեղեցիս թէ' իմ եւ թէ' իմ
բացակայութեան պահուն գործող քա-
րոզիչին թոշակը վճարած է: Այս ան-
գամ աւելի բարձր գործով մը զբաղած
ենք, այսինքն՝ Աւետարանին փրկարար
եւ մխիթարական պատգամով սփռիլ
մեր թշուառ հայրենակիցները որ օտար
երկրի քներու տակ հոս ու հոն ապաստան
գտած են:»

ԱՇԽԱՐՀԻ ՇՈՒՐՁ

ՈՒԱԼՏԷՆՍՑԻՆԵՐԸ ԵՒ ԳՈՆԳՈՐՏԱՆ

Իտալիոյ Փաշիսթ կառավարութեան
եւ Վադիկանի միջև կայացած համաձայ-
նութեան՝ Իտալիոյ Աւետարանական Ե-
կեղեցիին վրայ ունեցած հետեւանքի
մասին Աւետ. Միութեան նախագահին
կողմանէ կը գրուի հետեւեալը. —

«Այս համաձայնագիրը գործնակա-
նին մէջ գրեթէ ոչ մէկ փոփոխութիւն
յառաջ բերած է Իտալիոյ Աւետ. կաղ-
մակերպութեանց կացութեան մէջ, եւ
նոյնիսկ կարգ մը նոր իրաւասութիւն-
ներ ընծայած է, որոնցմէ մէկն է պաակի

* Վեր. Մ. Կ. Փափազեան՝ այս նպա-
տակով 18 նահանգներու մէջ 111 անգամ
Ամերիկացի Ժողովրդին խօսած է եւ
հարիւր հազարաւոր քուարներ հանգա-
նակուած են: Մ. Խ.

արարողութիւնը որ կատարելապէս օրինական արժէք մ'ունի: Այս համաձայնագրի կնքումէն ետքը Աւետ. Եկեղեցիներու ունկնդրութիւնը մեծապէս աւելցած է: Ուսուցէնսեան Աւետ. Եկեղեցիի Սինոդը մասնաւոր հեռագրով մը իր երախտագրութիւնը յայտնած է Մուսոլիսիի. Աւետ. Եկեղեցիին Իտալիոյ մէջ աւելի քան երբեք յարգանք կը վայելէ ներկայիս»:

Շիւ եորքի մէջ Մայիս 16 ին մեծ շուքով և 12000 մարդոց մասնակցութեամբ կատարուած է Փրկութեան Բանակի յօբելեանը, ի յիշատակ փրկութեան բանակի Ամերիկայի մէջ հաստատման 50րդ տարեդարձին: Այս առթիւ կատարուած է երկուքուկէս միլիոն տոլար արժող յիշատակարան տաճարի մը նուիրագործումը:

Աւետ. Ժողովական Եկեղեցիի միջազգային մէկ ժողովը պիտի ըլլայ Անգլիոյ Պունտութ քաղաքը, Յուլիս 4ին: Հայ Աւետ. Ժողովական Եկեղեցիին ևս հրաւիրուած է մասնակցելու:

Ներկայիս Զինատանի Քրիստոնեայ Եկեղեցիին է՛ն կարկառուն դէմքն է Տր. Շէնկ-Շինկ, որ հինգ տարուան մէջ 450 հազար Զինացիներ Քրիստոսի բերելու համար արշաւանքի մը ձեռնարկեր է:

Զինացի աշխարհածանօթ զինուորական Զօրավար Ֆէնկ Տր. Ժ. Բ. Մաթի միջոցաւ քրիստոնեայ եղած էր: Վերջերս բաւական զրոյցներ տարածուեցան՝ քրիստոնէութիւնը ձգած ըլլալուն մասին: Տր. Մաթ երբ վերջին անգամ Զինատան կը գտնուէր Ֆէնկէ գրութիւն մը կ'ստանայ իր մէկ սպային միջոցաւ, որ 1000 մղոն տեղ ճամբորդած էր իր պետին յարգանքները մատուցանելու: Տր. Մաթ Զօրավարին կը նուիրէ իր վերջին մէկ գիրքը (Confronting youngmen with J. Christ) զոր Զօր. Ֆէնկ անմիջապէս կը հրամայէ Զինարէնի թարգմանել

և կ'սկսի իրր զասագիրք գործածել իր սպայակոյտին հետ առօրեայ ուսումնասիրութեան մէջ: «Զօր. Ֆէնկ իր հաւատքին մէջ անխախտ է» կ'ըսէ Տր. Մաթ:

Տր. Փիթըր Էնկլի կը պնդէ թէ ա'լ երբեք արդարանալի չէ հոգեորի մը պաշտօնավարութիւնը բանակի և նաւատորմի մէջ: «Իր Ժամանակէն առաջ ձայնող մարգարէ մը» զիտել կ'ուտայ թերթ մը:

Զինատանի ազգայնական կառավարութեան ջանքերով վերջերս 40000 անգրագէտ չափահասներ գրել կարգաւ սորված են:

Շիւ կոյի մէջ հրատարակուած է Ս. Գիրք մը, որուն մէջ առարկելի մասերը զանց առնուած են, «Ի. դարու Ս. Գիրքը» անունով:

Բ. Թակոր, Հնդկ աշխարհածանօթ բանաստեղծն ու փիլիսոփան, որուն գրութիւնները և վարդապետութիւնները, և իր դպրոցին մէջ հրգել տուած երգերը աւետարանական խորունկ շունչով մը օժտուած են, թէպէտ ինքզինքը քրիստոնեայ չի դառնիր, վերջերս, Օքսֆորտի մէջ երեք դասախօսութիւնները: Թովիչ ազգեցութեան հնթարկելով ներկաները: Իր կրօնական փորձառութեան մասին ի մէջ այլոց ըսած է. «Վերջապէս կրօնքը ինծի հասաւ անակնկալօրէն, երեւան գալով ներքին գիտակցութեան անձանօթ մարգէն, որուն խորութեան մէջ կը բնակի մարդկութեան Յաւիտենական Հոգին, մեր ուղղակի ճանաչողութեան սահմանէն անդին»: Թակոր շատ կը հետաքրքրուի Քուէյքըրներով, որոնցմէ երկուքը Անգլիայէն մեկնած են դէպի Հնդկաստան իր դպրոցին մէջ ուսուցանելու համար:

ԱՅԼԵԻԱՅԼ

ԱՅՆԹԱՊԻ ՆԱԽԿԻՆ, ՀԱՅԻՐ ԵԿԵՂԵՑԻՆ
ԺՈՂՈՎԸ

Վեր. Մ. Կ. Փափազեանի ներկայու-
թիւնը մեծ խանդավառութիւն յառաջ
բերած է ինչպէս իր այցելած ամէն տեղ
նոյնպէս Հալէպի մէջ նաեւ.

Վեր. Փափազեան միշտ զբաղեալ մը-
նաց շարթուման միջոցին գանձանան դըպ-
րոցներ այցելութեան պահուն խօսելով,
իրիկունները արթնութեան ժողովներ
վարելով, և ամէն կիրակի երկու Աւետ.
բեմերէն քարոզելով, այլապէս հաւա-
քոյթներու մէջ ատենախօսելով, և զա-
նազան խորհրդակցական ժողովներու
մասնակցելով: Այս ամբողջին մէջ դը-
րոշմելով խղճամիտ խորհողի և հոգեւոր
տեսիւքի տէր մէկուն տպաւորութիւնը:

Յունիս լլի գիշերը Այնթապի Հայիք
Բ. Աւետ. Եկեղեցիի ժողովուրդը հաւա-
քոյթ մ'ունեցաւ նախագահութեամբ
Փրոֆ. Զ. Ս. Պէպճեանի, որուն կարճ
բացման խօսքէն ետքը Հայիք Եկեղեցի-
ին նախկին երգիչ խումբին երկսեռ
կարգ մը անդամներուն և կարգ մը նո-
րերու մասնակցութեամբ երգեր երգուե-
ցան, յիշել տալով անցեալի երջանիկ և
խաղաղ օրերը: Տիար Սարգիս Հալէպեան,
ապա, հայերէն ուղերձով մը եւ տաճկե-
րէն գեղեցիկ ոտանաւորով մը բարեկա-
լուստ մաղթեց Վեր. Փափազեանի և
իբր ընդհանուրին թարգմանը փափաք
յայտնեց որ ան միշտ հոս մնայ. (որոտըն-
դոստ ծափեր): Սա վերջինը շնորհա-
կալութիւն յայտնելէ ետքը յայտնուած
համակրանքին և ներբողալի բարե-
մաղթութեան համար ըսաւ թէ զինքը
դէպի հոս մղող շարժառիթներէն մէկն
էր Հայիք Եկեղեցիի պատկանող հիմնա-
դրամներու մէկ հաշուետուութիւնը ընել
և անոնց տէրը եղող ժողովուրդին հետ
համախորհուրդ անոնց չահագործման

համար կարգադրութիւններ ընել: Այս
հիմնադրամներն են. — 805 տոլ. Ռո. բին-
եան Ընկերութեան դրամը մատենադա-
րանի մը կազմութեան համար, 4621 տոլ.
կրթական հիմնադրամ, 12808 տոլ. Եկե-
ղեցական շէնքի դրամիւ 2989 տոլ. հան-
գուցեալ Ատուր Նիկիպիւեանի կտակը, որ
4 տարբեր նպատակներու — մէկ իններորդը
աղքատներու, մէկ իններորդը աշա-
կերտներու, մէկ իններորդը բեմի եւ վեց
իններորդը Ե. Ք. ընկերակցութեան հա-
մար պիտի գործածուէր: Հաւաքոյթիս
մէջ որոշուեցաւ Ռուբինեանի Փօնտը և
Նիկիպիւեանի կտակին վեց իններորդը
յատկացնել շէնքի մը, իբր ընկե-
րամշակութային կեդրոն մը ծառայե-
լու, իբր գրադարան, լսարան, զբօսարան
գործածուելու համար, կրթական ֆօնտը
եւ Նիկիպիւեանի կտակին երեք իննե-
րորդին տարեկան հասոյթը գործածել
Այնթապի Հայ Աւետ. դպրոցականներու
համար, իսկ Եկեղեցական շէնքի դրամին
տարեկան հասոյթը գործածել Միքայիլ
Արեւելքի մէջ պէտք եղած տեղեր Հայ
Աւետ. Եկեղեցական շէնքերու կառուց-
ման համար: Հայիք Եկեղեցիին պատ-
կանող Հալէպաբնակ ժողովուրդին 1133
հոգիներէն 17 տարեկանէն վեր մօտ 400ը
ներկայ էին այս հաւաքոյթին: (Այն-
թապի բոլոր Աւետարանականներու
թիւն է 1600 հոգի կամ 383 ընտանիք):
Փառաւոր անցեալի տէր և ատենօք
զօրաւոր Եկեղեցիի մը այս բեկորներուն
այսքան մեծ թիւով միեւնոյն տեղ կա-
րենալ հաւաքուիլը ներկայիս եղական
գէպք մըն է մեր գաղթականի կեան-
քին մէջ: Այս մեծաթիւ միացորդը և
իրենց նախկին հովիւը, որոնք անքակ-
տելի փոխադարձ վստահութեամբ և սի-
րով իրարու կապուած են, ապրեցան
մտերմիկ միջոցառումի մը շունչին յուզիչ
պահերը, երբ շատ մը թրջած աչքեր կը
յոլապնէին տրտմանոյն պատկերը հոգի-
ներու, պահարանը անցեալ փառքին և

նույն օրերու յիշատակներուն և ընդունարանը հաւաքոյթիս բերած ուրախութեան :

ԻՆՉՊԷՍ ԿԸ ԳՆԱՀԱՏԵՆ

Մամլթէյնի Հայ Թաքախտաւորաց Հիւանդանոցի Խնտակալութեան պանծապահը, Վեր. Ե. Հատիտեան, որ Պէյրութի Բ. Հայ Աւետ. Եկեղեցիին հովիւը ըլլալով հանդերձ բոլորանուէր կը ծառայէ այդ դժբախտները միթարիւտ, տխրատիթ յարձակման մը առարկայ կ'ըլլայ :

Մայիս 25 Կիրակի առտուն պաշտամունքէն և Երիտասարդաց հաւաքոյթին մէջ խօսելէ ետքը երբ Վեր. Հատիտեան տուն կը վերադառնար, քէմբի բացուած հրապարակին վրայ, եկեղեցիէն ոչ-հեռու, երկու երիտասարդներ կը յարձակին իր վրան պռուտով, «Դո՛ւն ես որ որբերու դրամը կ'իւրացնես» երբ Վեր. Հատիտեան կը յայտնէ թէ ինք որբերու հետ յարաբերութիւն չունի, այլ Մամլթէյնի հիւանդանոցին հետ է իր յարաբերութիւնը, երիտասարդներէն մին ձեռքի մի քանի հարուածներ կուտայ անոր՝ իւր վարձատրութիւն անոր անձնուէր աշխատանքին և ապա երկուքն ալ կ'անյայտանան : Այս տխուր դէպքին առթիւ կուզանք մեր ցաւակցութիւնը յայտնել Վեր. Հատիտեանի, որ մեծապէս գնահատութեան արժանի է թոքախտաւորներու ի նպաստ իր կատարած անխոնջ ծառայութեանց համար :

ԻՆՉՊԷՍ ԿԸ ԴԻՏԵՆ

Ճարապուհի Հայ Աւետ. Եկեղեցիին Վարչական Ժողովէն (Ժողովականներու ստորագրութեամբ) ստացանք գրութիւն մը իւր հերքմագիր «Յառաջ»ի Ապրիլ 19, 2. տարի, թիւ 242ին մէջ տեսնուած թղթակցութեան, որ կը նկատարէր Հայ Բող.ի մը «գարշիլի մէկ արար-

քը եւ ուրիշ ցաւերը» : Պէտք է ըսել թէ յիշեալ թղթակցութիւնը ծայրէ ծայր ստաբանութիւններէ կը բաղկանայ եւ արժէք ունի միայն ցուցնելու համար թղթակցութիւնը խմբագրողին և զայն հիւրընկալող թերթին մակարդակը : Մեզի համար շատ մեծ ցաւ մըն է հայ մամուլը այսչափ ինկած տեսնել : Աւելորդ կը նկատենք այդ գրութեան մէջ այս դէպքին և ուրիշ խնդիրներու մասին յայտնուած քննադատութիւններուն պատասխանել : Միայն հոս կ'ուզենք շեշտել թէ Վեր. Ս. Մանուկեան իբր թէ «գարշիլի արարքը» կատարող երիտասարդին պաակը կատարած է հրապարակաւ, երկու կողմերու կատարեալ հաւանութեամբ և հրաւէրին վրայ՝ առանց ուէ գումար մը ստանալու :

ԼՈՒՐԵՐՈՒ ԲԱԺԻՆ

Պոլսահայ թերթերու համեմատ Երեւանի Հայ կառավարութիւնը բացարձակապէս ազատ ձգած է Հայ Եկեղեցին իր փափաքած ձևով կատարելու էջմիածնի կաթողիկոսական ընտրութիւնը :

Պաղեստինի Անգլիական իշխանութիւնը յայտնած է սր նոր Պատրիարքի ընտրութիւնը կատարուի կարելի եղածին չափ շուտ և նոր կանոնադրութեան մը համեմատ :

Միարանութիւնը հռոմուն ցանկ մը պիտի պատրաստէ և անոնցմէ մէկը Պատրիարք պիտի ընտրուի Անգլ. Թագաւորին կողմէ տրուած լուրերուն համեմատ :

«Սիոն» թերթերու այս մասին տուած լուրերը կը հերքէ :

Վեհ. Կաթողիկոսը վարձատրած է Հալէպի քահանաներէն Տ. Յովհ. հայր էթմէքճեանը աւագութեամբ և Տ. Մըկրտիչ հայր Մուրադեանը լոնջախաչով մը :

Սուրբիայ և Լիբանանի Հայ Աւետ. Միութեան Խառն Գործադիր Մարմինը, որ վերջերս ժողով ունեցաւ Հալէպ, նկատի առաւ Ներքին Աւետ. Թանձնախումբի կողմանէ ներկայացուած առաջարկ մը, որով փափաք յայտնուած էր որ Վեր. Մ. Կ. Փափագեան իր ներկայ աւետարանչական դործունէութիւնը շարունակէ Սուրբիայ Աւետ. եկեղեցիներուն մէջ: Ժողովը միաձայնութեամբ և համակրանքով ընդունեց այս առաջարկը: Վեր. Փափագեանի հետ այս մասին եղած խօսակցութեան մէջ վերջինը յայտնեց թէ ինք սակայն ունի Սմերիկա վերադառնալ և թէ միայն հոն կարելի է այս մասին իր վերջնական պատասխանը տալ և կարգադրութիւնները ընել:

Հայ Կրթական Հիմնարկութեան կողմանէ Տիար Տ. Տիքիճեան գրութեամբ մը կ'իմացնէ Պոյզ Հայ Սփռչի տնօրէնութեան թէ 1950-51 դպրոցական տարեւերջին համար Թրէշմէն կարգին մէջ երկու աշակերաններուն 100ական տուար պիտի տրուի հիմնարկութեան կողմանէ:

Պոյզ Հայ Սփռչի Անգլերէնի և Մարգանքի ուսուցիչը Մր. Տ. Ճիւլիըս իր եռամեայ պայմանաժամը լրացուցած ըլլալով պիտի մեկնի Սմերիկա: Իրեն պիտի յաջորդէ Մր. Ուիլիամ Գրուելը, Նիւ Հէմքալը նահանգի Գոնուէյ քաղաքէն, ուր տեղւոյն Հայ Աթուլին ուսուցիչներէն է ներկայիս:

Փրոֆ. Լ. Լեւոնեան Յուլիսի սկիզբը Հալէպ կ'սպասուի: Յարգելի Փրոֆէսորը Հալէպ գալէ առաջ թերեւ մի քանի օրեր պիտի անցնէ Լիբանանի մէջ:

Վեր. Ե. Քասուշի, Կ. Պոլսոյ Էմմանուէլ եկեղեցիին հովիւը, Քէսապի Հայ Աւետ. եկեղեցիին կողմանէ զրկուած հրաւերը ընդունած է և Օգոստոսի վերջերը կը յուսացուի որ իր նոր պաշտօնատեղին հասած ըլլայ:

Էթիզ Օլուկի քարոզիչ-ուսուցիչ Պատ. Յկ. Կիւրէճեան նոյն պաշտօնով

Պէյլանի եկեղեցիին մէջ գործելու հրաւերուած է:

Պարսկաստանի Սալմաս քաղաքին և չրջակայքը պատահող ահույի երկրաշարժի մը տուժիւ շատ մը Հայեր ևս փասուած են: Պ. Գ. Կիւլպէնեան 500 անգ. ոսկի զրկած է աղէտեալներուն:

Խաչիկ Քհնյ. Գուզգեան, բնիկ Վանեցի և նախկին Հայ Աւետ. երէց մը, հրաժարած է Հայ Առաք. եկեղեցւոյ քահանայութենէն:

Թունիս Տին, Ս. Քառասուն Մանկանց եկեղեցիին մէջ, Հալէպ, հանդիսաւոր հոգեհանգիստ կատարուեցաւ ի յիշատակ և ի յարգանս ողբացեալ հայասէր Նորվէկիացի Թրիտօֆ Նանսէնի:

Գրբըզ Խանի մէջ նորաշէն Ս. Աստուածածին եկեղեցիին օծումը կատարուած է նախագահութեամբ Վահ. Կաթողիկոսի:

Հալէպի քէմբերուն վեց չրջանակներուն մէջ կան 2973 տնակներ, որոնց մէջ կը բնակին 14727 մարդիկ, 7183 այր և 7544 կին:

Վերջին պահուն թերթերը գուժեցին մահը Պօղոս Նուպար Փաշայի, Մեմ ՀԱՅՈՒՆ որ հայ ժամանակակից պատմութեան մէջ անմահ յիշատակ մը թողուց իր ազգին կատարած քաղաքական ծառայութեամբ և բարերութեամբ:

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Մեր կամքէն անկախ տպարանական դժուարութեանց պատճառով անկարելի եղաւ թերթը հրատարակել իր ժամանակին: Պակաս թիւը պիտի լրացուի յաջորդ թիւերէն մէկը զոյգ հրատարակելով:

صاحب الامتياز و مدير المسئول

قنيس قره بېت هاروتونيان